26. **Ֆռանսա.** Վերսայլի մէջ խաղաղութեան նախապայմանները կստորագրուին :

27. **Աւստրիա.** Չինաստանի և Սիամի կառավարութեանց հետ եղած Վաճառականական և Բարեկամական դաշնագրութիւնը

կրհաստատուելի երեսփոխանական ժողովէն:

» **Հիւս. Գեւմ.** Կիյեօմ Կայսրն՝ Ռուսիոյ Կայսեր հաղորդելով խաղաղութեան նախապայմանաց որոշումն ու ստորագրութիւնը՝ կը նշմարէ նաև թէ պատերազմին առաւելևս չընդհանրանալոյն իսկ պատճառ եղած է նոյն ինքն Ալէքսանդր, և ասոր համար մասնաւոր շնորհակալութիւն կը մատուցանէ:

### Մարտ.

1. **Ֆռանցա.** Պօրտօի մէջ Երեսփոխանական ժողովն իւր 546 (ընդդէմ 107) քուէովն հաւանութիւն կը տայ Ֆռանցօ Իրուսիական պատերազմի խաղաղութեան նախապայմանաց: Այս առթիւ Երեսփոխանական ժողովն ամբողջապէս՝ անիծիւք, բանադրանօք, անաթէմայիւք և ցասամբ կը վճռէ Նախօլէօն Պօնափառթին ու նորա գերդաստանի գահիրկկեցութիւնը՝ Ֆռանսայի կրած ամեն թշուառութիւնքը նորա պատասխանատուութեան ներքև ձգելով:

» Փարիզու Ազգային զինուորներէն զունդ մի՝ Թնդանօթից մեծ մասը իւր ձեռքն անցունելով՝ Մօն-Մարդը ու Պէլ-Վիլ անուն բարձանց վերայ կը զետեղէ զանոնք՝ Գերմանական բանակին Փարիզու մէջ մըտնելն արգիլելոյ պատրուակաւ:

» Գերմանական բանակէն բանի մի զունդ Փարիզ բաղաքին մէջ կը մտնեն և զօրահանդէս մի կը ներկայացնեն Լօն-Շանի վերայ ի ներկայութեան Կիյեօմ Կայսեր:

2. Ժիւլ Սիմօն՝ Արտաքին գործոց պաշտօնատարն՝ Նախօլէօն Պօնափառթի և նորա գերդաստանին յաւիտենական անկումը յայտագրով մի կը հաղորդէ Ֆռանսային բոլոր Գաւառաց, պատասխանատու կացուցանելով զՆախօլէօն՝ Ֆռանսայի վերայ եղած արշաւանաց ու անկէ ծագած բոլոր աղետիցն ու երկրին ճնշեալ ու հատուածեալ վիճակին:

3. **Ռուսիա.** Անցեալ Նոյեմբեր 8/20ին տրուած Կայսերական Հրովարտակն(որ Սուրումի սահմանին ստրկաց խնդրոյն կը վերաբերէր) կը հրատարակուի և այս առթիւ Կովկասեան զաւառաց մէջի ստրկութիւնն ալ բոլորովին կը ջնջուի: — Կեցցէ Ալէքսանդր Երկրորդ, և Բիւր կէցցէ. Եւ յիրաւի, սորա Գահակալութենէն ի վեր Ռուսիոյ մէջ եղած յառաջադիմական արարքն սքանչանաց արժանի են. բայց և այնպէս Ռուսիոյ պատուական ժողովուրդն ապերախտ չը պիտի գտնուի, և այս յառաջադէմ սկզբնաւորութիւնը օրհնութեամբ պիտի յիշատակէ իւր պատմութեան մէջ —:

4. **Զինաստան.** Կառավարութիւնն Եւրոպիոյ արտաքին գործոց Պաշտօնէից կը ծանուցանէ թէ Զինաստանցւոց ու Եւրոպացւոց հաղորդակցութենէն առաջ եկած աղետից վերջ մի տալոյ համար առաջին զիտելոյ խնդիրն այն է, որ Երկրի կրօնքին հակառակ բարոզներ չը տրուին և ամեն բարոզիչ (ի բաց առեալ ծովեզերեայ բաղաբաց մէջ գտնուողներն) իբրև չինացի հպատակ՝ Երկրին օրինաց հնազանդին: — Ասել է թէ ատելութեանց սկզբնապատճառքն այն անձինք են եղեր, որք իւրեանց Հռովմի մէջ կատարուած ամենատկար քուէհամարէն ալ չամաչելով՝ կը յանդգնին նաև Զինաստան երթալ՝ բնակչաց հոգիներն ազատելոյ պատրուակաւ, և այսպէս՝ փոխանակ սիրոյ և խաղաղութեան Վարդապետ լինելոյ՝ Տիեզերաց մէջ խռովութեան և բսութեան առաջնորդ կը հանդիսանան: —

6. **Հիւս. Գերմ.** Գահագուրկն Նափօլէօն Պանսիաթ՝ Ֆրանսայի Երեսփոխանական ժողովոյն ամսոյս մէկի վճռոյն ղէմ բողոք բառնալով՝ երկար բարակ ճողովարանութիւն կընէ: — Լօստօնի մէջ վայրենի մի տեսած եմ և մտքիս այնչափ լաւ տպաւորուած է նորա ղէմբը, որ խղճի մտօք կրնամ հաստատել թէ Նափօլէօնի ղէմբէն

աւելի ամօթխածութիւն կը կրէր: Էն՝. գուցէ այնպիսի սեկերես վայրենիք ալ գտնուին, Նափօլէօնի չափ անձիրու չկարմրող, զորս ոչ տեսած և ոչ տեսնելիք ունիմ: —

7. **Ֆրանսա.** Կիյեօմ Կայսր կը մեկնի Վերսալէն և կը ժամանէ ի Ֆէռիէս.

» **Սմբիդա.** Փէրուի մէջ արտաքոյ կարգի հեղեղը կը պատահի և երկամուղիներն ամբողջապէս վնասելէ յետոյ՝ Հուսի բաղաբը բոլորովին հիմնայատակ կընէ, և Լամպայէք բաղաբն ալ (20,000 բնակչօք) կը բշէ կը տանի միայն երեք տուն կանգուն ձգելով:

9. **Հիւս. Գերմ.** Պիսմարք Ֆէռիէսէն կը մեկնի և կը ժամանէ ի Պէռլին:

10. **Ֆրանսա.** Երեսփոխանական ժողովն որոշում կը տայ Պօստօէն ի Վէրսալ և ոչ ի Փարիզ փոխադրուելոյ: — Ոմանց կարծիքն այն է թէ այս որոշումն եղաւ սկզբնապատճառ այն ամենայն աղէտից զորս բովանդաններն առիթ գտան հասուցանելոյ ի վերայ բաղաբին Փարիզու: —

» **Միաց. Նահ.** Կրանթ Նախագահն Կիյեօմայ Կայսր անուանիլն իմանալով Պարոն Ժէրօլ Բրուսիացի ղեսպանէն՝ անոր պատասխան կը տայ, ասելով թէ՛ Գերմանացիք ալ Միացեալ Նահանգաց ժողովրդ-

եան պէս մեծամեծ զոհողութեամբ իւրեանց ազատութիւնը ձեռք բերած լինելնուն համար՝ ամենամեծ համակրութեամբ ուրախակցութիւն կը յայտնէ նոր եղելութեան վերայ:—Միայն սա տարբերութեամբ, որ Միացեալ Նահանգցիք՝ ի հպատակութենէ ազատ բաղաքացի եղան, իսկ Գերմանացիք զինուորական կառավարութեան մի հպատակեցան — :

13. **Միաց. Նահ.** Երեսփոխանական ժողովոյն մէջ՝ Ադի, Թէյի և Աժուխի մտից վերաբերեալ տրոց խնդիրը կը յուզուի և բուէի վճռով նոցա տուրբը կը շնջուի :

» **Հիւս. Գերմ.** Գերմանացի Թագաւորը և Իշխանք իւրեանց երկիրները կը դառնան, նոյնպէս Կիյեօմ կայսր կը մեկնի Ֆէռիէէն և կը ժամանէ ի Նանսի :

» **Անգլիա.** Լօնտօնի Դեսպանական ժողովն՝ հետն ունենալով Ֆրանսայի դեսպանը՝ կտորագրէ Սեաւ ծովու և Տանուպի չէզոքութեան դաշնագիրը :

17. **Հիւս. Գերմ.** Կիյեօմ կայսր Նանսիէն կը մեկնի, և Ֆրանքֆորդ, Կօթա ու Վէյմար հանդիպելով կը ժամանէ ի Պէռլին՝ Գահաժառանգ իշխանին հետ, ուր և սմենափառաւոր ընդունելութիւն կը գտնէ:

18. **Ֆրանսա.** Կառավարութիւնն իւր

շանից ի դերն ելնելը տեսնելով՝ փորձ մի ընել կուզէ Մօն Մարդի բարձունքն հանաւած թնդանօթները զինու զօրութեամբ ազգային զօրաց ձեռքէն խլելոյ համար : Այս փորձը չի յաջողիր և յարձակումն ընող զինուորաց մեծ մասը կը միանայ ազգայնոց հետ : Վինօ զօրապետն ալ զայս տեսնելով՝ կը պարտաւորի Սէն գետի ձախակողմեան եզերքն ապաստանիլ : Ապստամբը կը ձերբակալեն՝ Շանզի, Լըքօնթ և Թօմա զօրապետները՝ և Շանզին թողով միւս երկուքն հրացանի կը բռնեն :

» **Ռուսիա.** Ալէքսանդր Կայսրն՝ Հիւսիսային Գերմանիոյ, Անգլիոյ, Աւստրօ-Հունկարիոյ, Ռուսիոյ, Իտալիոյ. Ֆրանսայի և Թուրքիոյ մէջ՝ Սեաւ ծովու և Տանուպի վերաբերեալ դաշնագիրն՝ իբրև յաւելուած 1856 ի դաշնագրոյն՝ կը վաւերացնէ :

» **Հիւս. Գերմ.** Ռուսիոյ Կայսեր կողմանէ շնորհաւորութեան գացող պատգամաւորք իւրեանց առաջնորդ ունենալով զՎոանճէլ զօրապետն՝ կը ժամանեն ի Պէռլին և կը ներկայանան Կիյեօմ կայսեր :

19. **Ֆրանսա.** Փարիզու ապստամբութեան առժամանակեայ ժողովն (որ 37 անգամներէ կը բաղկանայ) Վինօ զօրապետի փախուստն առիթ բռնելով՝ Կառավարու-

Թիւնը խոյս տուած կը համարի և յայտարարուծեամբ ժողովուրդն ընտրուծեան կը հրաւիրէ, խոստանալով նմա՝ օրինաւոր Հանրապետուծիւն մի հիմնել. բաց ի յայսմանէ՝ պարտամուրհակաց ու փոխանակագրոց պայմանաժամն ամիս մի ևս կ'երկարէ:

» **Հիւս. Գեւմ.** Նափօլէօն ՊոնափառԹ կը մեկնի Վիլհէլմսհօհէյէն Անգլիա երթալոյ համար: — Այս ալ գրելու բան էր հիմա: Եւ մի՞թէ աշխարհիս մէջ բարոյապէս կորսուած մարդիկն յիշատակելոյ պատիժն ալ խեղճ Հայոցս մնաց — :

20. **Անգլիա.** Նափօլէօն ՊոնափառԹ Տուվր կը ժամանէ և անտի Զիզլէհըրսդ կ'ուղևորի, ուր Մատամէօժէնի ՊոնափառԹ կը բնակէր 1870 Սեպտեմբեր 4 էն ի վեր:

21. **Հիւս. Գեւմ.** Կոմս Պիսմարք Ժառանգական Իշխանուծեան տիտղոսը կընդունի Կիյեօմ կայսրէն: — Ըսել է որ Պիսմարքի սերունդն իւր իշխանուծեան Տոնախմբուծիւնը Հայոցս Ամանորոյն պիտի կատարէ, զոր կը տօնեմք ամեն տարի յ 9/21 Մարտի: Եթէ Պիսմարք Իշխան՝ մեր Բնական սարեմուսքը տօնէ, մեք ալ իրեն Իշխանուծեան Ծնունդը մի և նոյն աւուր մէջ կը տօնեմք փոխադարձաբար — :

» Փարիզի մէջ ծագած խռովուծեան

պատճառաւ՝ գերեցեալ Ֆուանսըզ զինուորաց մեկնիլը կարգիլուի Գերմանական կառավարուծեան կողմանէ:

22. **Աւստրիա.** Փէրուի, Կուաթէմալայի և Բիլիոյ կառավարուծեանց հետ եղած Բարեկամական և Վաճառականական դաշնագրուծիւնը կը հաստատուի Երեսփոխանական ժողովէն:

23. **Անգլիա.** Թիէն-Զինի սպաննուծեանց լուրը կը բացատրուի Փառլամէնթի մէջ և որոշումն կը տրուի որ Զինաստանի կառավարուծեան հետ առաւել ևս խստուծեամբ խօսուի:

26. **Ֆուանսա.** Քօմիւններուն առաջարկած ընտրուծիւնը կը կատարուի առանց Փարիզեցոց մեծագոյն մասի մասնակցուծեան: Ընտրեալներուն մէջէն ծանօթ անձինք ասոնք են. Աստի, Տէլէքլիւզ, Ֆլօրանս, Փիա և Պլանքի: — Ամենքն ալ իրարմէ կարմիր համարուած — :

31. **Հելլադա.** Երեսփոխանական ժողովն որոշումն կըտայ ազատուծեան յիսներորդ տարին տօնելոյ և 1821 ին Կոստանդնուպօլսոյ մէջ ի մահ դատապարտուած Իրիզորիոս Պատրիարքին ոսկերքն Օտեսայէն բերել պալոյ:

## Ապրիլ .

2. **Ֆռանսա.** Փարիզի ապստամբք ու Վերսայլի զինուորք իրարու դէմ կը պատերազմին և Մօն-Վալէնտինի բերդը Վերսայլի բանակին ձեռք կանցնի:

3 » Փարիզի ապստամբք Մօն-Վալէնտինին ու Շամբլյեօնի մէջտեղ կը պատերազմին. Ֆլուան կը մեռնի և ապըստամբք Վերսայլի վերայ կ'արշաւեն, բայց ներս չեն կրնար մտնել ու յետս կընկրկին. այս պատերազմը կը տևէ մինչ ի 6 Ապրիլ, որ նոյն աւուր մէջ Փարիզի արքեպիսկոպոսն ալ Գօմիւններէն կը ձերբակալի:

7. » Վերսայլի զինուորք սաստիկ յարձակումն կընեն Նէօյլի վերայ: Մօն-Վալէնտինի բերդին ու Փօռթ-Մայէօյի թընդանօթներն իրարու դէմ անդադար կ'որոտան:

10. **Միաց. Նահ.** Երեսփոխանական ժողովն ընդհանուր ներողութեան առաջարկութիւնն ընդունելով՝ քաղաքական իրաւունքը կը վերահաստատէ ամեն անոնց, որք Հարաւայնոց ապստամբութեան մասնակցած են ըստ ամենայնի, մինչև անգամ անոնց, որք բաժանման քուէ և ստուած են:

13. **Ֆռանսա.** Գերմանացի զօրաբանակն՝ ընդ հրամանատարութեամբ Ֆապ-

րիզ զօրապետին, Ռուանէն յետս կը դառնայ և Փարիզու մօտ ի Սօսսի կը բանակի:

17. **Իսպիա.** Ֆլօրէնցայի մէջ Մովային համազգական արուեստահանդէսն այսօր կը բացուի:

19. **Ֆռանսա.** Մինչև ցայսօր Փարիզու ապստամբաց ու Վերսայլի կառավարութեան բանակներն իրարու դէմ բաղխելով անդադար կը պատերազմին: Մագ-Մահօն մարաշխատն ամսոյս 11 ին հրամանատար կը կարգուի Վերսայլի բանակին, որոյ թիւն 80,000 ի կը հասնի և որ նորս առաջնորդութեամբ Անիէռի կը տիրէ:

22. » Ալճէնիոյ մէջ ծագած ապստամբութեան լուրը կը հասնի և բոլոր Ֆռանսան տարակուսանաց ու սասանման մէջ կը ձգէ: Այս բօթին վերայ կ'աւելնայնաև Սէնդէյիէնի, Լիօնի, Լիմօժի, Դուլուսի և Մարսիլիոյ մէջ ծագած ապստամբական շարժմանց լուրերը, որոց առաջնորդողք Փարիզու ապստամբաց կամակից կը հանդիսանան և սգոյ մէջ կը ձգեն զբոլոր Ֆռանսա:

27. **Անգլիա.** Վառիկի վերայ (չաբմաբար զբարիթ) նորեկ տրոց խնդիրը ժողովրդեան ականջին հասնելով՝ բազմաթիւ գործաւորք իւրեանց դժգոհութիւնն յայտնելոյ ցոյցեր ըրած էին ամսոյս 23 ին. Կա-

ուսվարութիւնն այս ժողովրդային դժգոհութիւնը նկատողութեան առնելով՝ իւր առժամանակեայ որոշումը յետս կը կոչէ և վառիկի տուրքը հաստատուած կը ջնջուի:

— Որքան խոհեմ կառավարութիւն և ինչ խելօք վարչութիւն: Եւ սակայն՝ որքան որ զգաստ կերևի այս ժողովորդն իւր պահանջմանց մէջ՝ նոյնքան և խիստ է օրինապահութեան մէջ. վասն այնորիկ որ և իցէ խնդրոյն ղեռ որոշակի վճիռ չտրուած՝ խնդրոյն և իւր իրաւանց վերայ լնւ մի կը մտածէ և ըստ այնմ ցոյցեր կընէ, բայց և այնպէս վճռական օրէնքն ալ, Ամերիգացւոց նման, կատարելապէս կը յարգէ, և յայսմ մասին Անգլիոյ ժողովուրդն մէկ հատիկ կը համարուի հին աշխարհի մէջ —:

30. **Աւղանիստան.** Եաբուպ Խան Արքայազուն Իշխանն իւր Հօրմէն կը յաղթուի Հէրաղի մօտ:

### Մայիս.

7. **Միաց. Նահ.** Անգլիոյ և Միացեալ Նահանգաց կողմանէ՝ լիակատար իշխանութիւն ունեցող ղեսպանաց մէջ՝ Ալպամայի խնդրոյն վերաբերեալ պայմանագրութիւն մի ստորագրուելով՝ հինգ անդամէ բաղկացեալ քննիչ միանգամայն վճռատու յանձնա-

ժողովոյ մ'ընտրութեան սկզբունքը կընդունուի: Վերոյիշեալ հինգ անդամք պիտի ընտրուին՝ Անգլիոյ, Իտալիոյ, Զուիցէրայի, Պապիլիոյ և Միացեալ Նահանգաց կողմանէ:

8. **Ֆռանսա.** Պ. Թիէռ՝ պաշտօնական յայտարարութեամբ՝ խրատ կը տայ Փարիզու ժողովրդեան որ փորձ մի ընեն բովանդետութեան տիրապետութենէն ազատելոյ համար: Բովանդէ այս յայտարարութիւնն առիթ բռնելով՝ Փարիզու մէջ Թիէռի ունեցած ընդարձակ և գեղեցիկ ապարանքը կը բանդեն:

9. » Փարիզու ապստամբք Իսիլի բերդը կը ձգեն և Վէրսայլի բանակն անոր կը տիրէ:

10. **Հիւս. Գերմ.** Ֆրանսայի և Գերմանիոյ մէջ՝ խաղաղութեան վերջնական դաշնագիրը կըստորագրուի յերկոցունց կողմանց ի Ֆրանքֆորդ: Ստորագրողք են՝ Պիսմարք Գերմանիոյ՝ և Ժիւլ Ֆալո ու Փուլէ Գէռմիէյ Ֆրանսայի կողմանէ: Դաշնադրութեան պայմանքն են, Ֆրանսան՝ Ալզասի գաւառն ամբողջապէս՝ և Լօռէնի գաւառին մէկ մասը (Մէջ բաղաբաւ հանդերձ) կը թողու Գերմանական կայսրութեան. միմիայն Պէլժօն բերդապատ քաղաքն իրեն

պահելոյ պայմանաւ : Բաց ի սոցանէ՛  
Ֆոանսա կը պարտաւորի 5,000,000,000  
(հինգ միլիառ) ֆոանքի պատերազմական  
տուգանք վճարել երեք տարւոյ միջոցի մէջ.  
Գերմանացի զօրքն յիշեալ միջոցին վճար-  
եալ զուարացն համեմատ՝ հետզհետէ  
քաշուելով՝ ամբողջ վճարման հետ իրենք  
ալ բոլորովին պիտի անհետանան :

12. **Ռուսիա.** Սուլթան Ապտիւլ Ազիզի  
կողմանէ՛ Ռուսաց կայսեր տրուելիք Օսմա-  
նիէ Նեանր-գիլլանը կը ներկայացուի Կայ-  
սեր՝ Օսմանեան ղեսպան Բիւսթէմ Պէյի և  
նոյն նշանը տանող Խորասանճեան Յովհան-  
նէս Էֆէնտիի ձեռամբ՝ ի պալատան Փէ-  
ժերպուրկի : Կայսրն հանդիսաւոր կերպիւ  
կ'ընդունի զայն և պատուական մատանի  
մի կը շնորհէ Խորասանճեան Յ. Էֆէնտի-  
ին ի նշան գոհունակութեան :

16. **Ֆոանսա.** Փարիզու ապստամբք՝  
արտագոյ կարգի հանդիսիւ՝ Վանտօմի հրա-  
պարակին մէջ կեցող Նափօլէոնի առաջնոյ  
հնազնատես պղնձեայ սիւնը վար առնելով  
կը քանդեն ի վրէժխնդրութիւն Պանսփառ-  
դեան գերդաստանի :

18. » Երեսփոխանական ժողովն ամսոյս  
10 ին Ֆոանքֆօրդի մէջ ստորագրեալ վերջ-  
նական դաշնագրոյն պարունակութիւնն ըն-

դունելով՝ 440 (ընդդէմ 98) բուէիւք կը  
հաստատէ զայն, վերստին յիշելով այն՝  
Մարտի մէկի քաղաքական անէժքն, անա-  
ժէմայն ու յիշոցներն ընդդէմ Նափօլէոնի  
և նորա Գերդաստանին :

19. » Փարիզու ապստամբք՝ Երրորդու-  
Յեան եկեղեցոյ բոլոր արժամեղէն ու ոս-  
կեղէն զարդերն ու զանձը յաւարի առնելով՝  
որոշումն կը տան նոյն ընթացքը շարունա-  
կել նաև բոլոր եկեղեցեաց դէմ, և յետ այնու-  
րիկ փակել նոցա դռները :

20. **Ս. մերիզա.** Կուսմէմալայի մէջ՝  
ամսոյս սկիզբէն ի վեր ապստամբութիւն  
կը ծագի, որ հետզհետէ տարածուելով  
Էսքուիանձլա քաղաքին կը ախրէ :

» » Սան Սալվատօրի կառավարութիւնն  
Մարտի սկիզբէն ի վեր պատերազմհրատա-  
րակելով ընդդէմ Հոնտուրացւոց, իւր զին-  
ուորաց քայլ կը տայ և այս երկու երկրին  
բանակներն Սան Միկէլի մօտ կը հակադասին :

21. **Ֆոանսա.** Վէրսայլի կառավա-  
րութեան բանակն ապստամբաց յուսահատ  
ու սարսափելի ընդդիմութիւնը յաղթելով՝  
Սէն Բլուշի դռնէն Փարիզ կը մտնէ, ժամը  
4 ին (պլա Թուրքա 8<sup>1</sup>/<sub>2</sub>). Ապստամբք՝ ա-  
ռաւել ևս զայրացեալ կըսկսին փէրօօլով  
հրկիզել՝ Թիւյեքուիյի, ՕՐէլ տը Վիլի,

լուսի, Լէժիօն տ'Օնէօռի, Փալէ Ռօայեալի և պաշտօնատարաց ժողովատան ( Conseil d'Etat) ահագնակառոյց շէնքերը :

22. **Սպանիա.** Երեսփոխանաց Հանրապետական մասն առաջարկութիւն կընէ Նորեկ Թագաւորին ընտրութիւնը անվաւէր համարելոյ : Նոյն միջոցին՝ ժողովրդեան խուռն բազմութիւն մի ներս կը մտնէ և ժողովն իսկ տակն ու վերայ կը լինի :

24. **Ֆուանսա.** Մօն-Մարդը կառավարութեան զինուորաց ձեռք կանցնի : Լիւքսամպուրկի պալատան պարտիզին մէջ Վառօի մի շտեմարան բռնկելով կը պայթի :

25. **Պէճիգա.** Արտաքին գործոց պաշտօնեայն յայտարարութիւն կընէ, ասելով Թէ՛ Կառավարութիւնն Փարիզու բոմբակները քաղաքական յանցաւորաց կարգէն չհամարելով՝ Պէճիգա մտնողներուն բոլորն ալ պիտի ձերբակալէ : — Պէճիգայի սահմաններէն ներս մտնող քաղաքական յանցաւոր համարուածներն՝ ըստ օրինի երկրին՝ կը պաշտպանուին . և ահա այս մտօք է, որ Արտաքին գործոց պաշտօնեայն Պրզլխնութիւն կընէ, իւր յայտարարութեամբ . . . . Այս տեսակ անձանց ամենն ալ քաղաքական Վարդապետներ են և Պապաբանող կրօնաւորաց նման՝ ասոնք ալ հարկին պահան-

ջած ատեն՝ Ելասիխական քաշբուտուրով կը Բաղաքարանեն — :

29. **Ֆուանսա.** Ազգային պատերազմը կը դադարի 30,000 ի մօտ անձինք, ընդ որս կանայք ու խիստ ղեռահաս պատանիք ձերբակալ կը լինին : Միւս կողմանէ՝ Փարիզու Արքեպիսկոպոսն, Պօնժան անուն Բարձրագոյն Ատենի նախագահն ու Տիւնկէռի Աբբայն ուրիշ պատանդ համարուած 63 անձանց հետ հրացանի կը բռնուին բոմբակներէն : Եւ դարձեալ՝ կառավարութեան զինուորքն որի՞ ձեռք որ գէնք կը տեսնեն և որի վերայ որ կասկած կընեն՝ ամենն ալ ձերբակալելէ յետոյ՝ անհամար մարդիկ հրացանի կը բռնեն : — Արիւն, արիւն և դարձեալ արիւն . . . . . Ոն՛ արդեօք հրքան անմեղ անձինք նահատակեցան . . .

Նափօլէժն ղու , անիծեալ լինիս — :

30. **Սպանիա.** Կառավարութիւնն յայտարարութիւն կընէ, ասելով Թէ՛ Սպանիա չը կրնար իւր Սահմանները գոցել բոմբակներուն դէմ . իսկ Ֆուանսայի պահանջումն, ալ, ըստ դաշնադրութեանց, պիտի յարգէ : Երեսփոխանական ժողովն ալ յիւր կողմանէ կը դատապարտէ բոմբակներուն ընթացքը :

**Յուճիս .**

6. **Ս. մերիգա.** Պռազիլիոյ կառավա-

րուծիւնն ընդհանուր ժողովոյ որոշման համաձայնելով՝ զերեաց ազատութիւնը կը վճռէ և այս ազատութիւնը եօթը տարւոյ մէջ լրանալոյ և մասնաւոր անձանց (գերեաց տեարց) փնասուց հատուցումն ընելոյ կանոնազրուծիւնը կը վաւերացնէ: — Պռազիլիոյ Կայսրութիւնն Ամերիգայի մէջ զբտնուելուն և Միացեալ Նահանգաց օրինակն ալ աչքին մօտ ունենալուն համար՝ չենք կարող այս խնդիրն ուշ մնացած է չըսել: —

8. **Հիւս. Գերմ.** Ռուսաց Կայսրն Էմս երթալոյ միջոցին՝ Պէուլին կը հանդիպի, Կիյեօմ կայսեր այցելութիւն ընելոյ համար:

» **Յուսուս.** Ժիւլ Ֆալո շրջաբերական մի կը հանէ և անոր մէջ ապստամբութեան պատճառները նշմարելով՝ հաստատել կ'ուզէ թէ՛ Փարիզու մէջ 30,000 զորժաւորաց հաւաքումն ու նոցա Էնրէաւաւիօնալախան սկզբունքն առիթ տուած է անչափ արիւնհեղուծեան: — Մեր կարծիքն այն է թէ Ժիւլ-Ֆալո շատ շտապած է այս խնդրոյն սկզբնապատճառը մատնանիշ ընելոյ. թող Ժիւլ Ֆալոի խաբրը չմնայ. մեք ապագայ պատմութեան պիտի ձգեմք այդ խնդրոյն վճիռը, և առայժմ նորա վճիռն իբր Քանքէզի պիտի նկատեմք: —

» Այն առաջարկութիւնն որ եղած էր Օռ-

լէանեան և Պուռպօնեան իշխանաց նկատմամբ՝ թէ չկարենան մտնել ի Ֆուանսայ մինչև որ Սահմանադրութիւնն հիմնովին չհաստատուի, Երեսփոխանական ժողովոյն 429 (ընդդէմ 168) քուէով կը մերժուի: Նոյն ժողովն դարձեալ 484 քուէով՝ Պուռպօնեան զերդաստանի վերայ ծանրացած աքսորման վճիռը կը ջնջէ, հետևաբար 448 (ընդդէմ 113) քուէով՝ Տիւր տ'Օմալ և Ժօանվիլ իշխանաց ընտրելեաց նոր ցանկին մէջ իբրև քաղաքացի՝ անցնելոյ իրաւունքնին կը հաստատէ: — Գալ տարուան Տարեցոյցնիս՝ այս պարկեշտ իշխանաց քուծիւնն ու Ֆուանսայի անդորրութեանն ու պատուոյն հակառակ բռնած ընծացրին պիտի նկարագրէ: —

16. **Իսպալիս.** Սէն Կօծարի երկամուշտոյն խնդիրն երեսփոխանական ժողովոյն կը ներկայանայ և շինութեանն որոշում կը տրուի: — Նափօլէօնի լուսահողի կառավարութիւնն ինչ խնդիրներ չը հանեց այս երկամուշտոյն պատճառաւ և ինչ փորձանք չը հիւսեց Պէլճիգայի գլխոյն: —

18. **Հիւս. Գերմ.** Կերմանական բոլոր կայսրութեան մէջ՝ աղօթք, պաշտամունք և շնորհակալութիւնը կը մատուցուին Աստուծոյ: — Անշուշտ պատերազմի յաջող ելիցն համար պիտի լինի այս: Աղօթից

ձայնը՝ մեր սրտին ու հոգւոյն ալ քաղցրահամբոյր է և նորա էական շնորհքը չենք կարող երբէք ուրանալ. և սակայն կը հաւատամք թէ այն Արարիչն որ շէշտելով պատուիրած է թէ՛ Մի սպանանէ՝ զոհունակութեամբ չի լսեր այս տեսակաղօթից ձայնը, և գուցէ երես ալ դարձունէ, քանզի Աբէլներու արիւնն ի սկզբանէ բողոք բարձած է Արարչին և պիտի բառնայ ցյաւիտեան — :

24. **Անգլիա.** Երեսփոխանական ժողովոյն մէջ Միջերկրական ծովուն ու Պարսից ծոցոյն մէջ յաղորդակցութեան ճանրայ մի բանալոյ նպատակաւ՝ Օովեգերբէն սկսեալ Եփրատայ ցորերն անցնելով մինչ ի Պարսից ծոցոյն եզերքը՝ ներկաձուղի մի շինելոյ առաջարկութիւնը նկատողութեան կ'առնուի, և այս խնդիրը քննելոյ համար մասնաժողով մի կ'ազմելոյ որոշուած կը տրուի:

28. **Ֆռանցա.** Առաջարկուած երկուք ու կէս միլեառին փոխառութիւնը վեց ժամու միջոցին չորս ու կէս միլեառի ստորագրութիւն կ'ունենայ, որոյ Փարիզ քաղաքը միայն 2 ու կէս միլեառի կատորագրուի: Այս առթիւ՝ Գանձուց Պաշտօնեայն կը ծանուցանէ Երեսփոխանական ժողովոյն թէ՛ այս արդեանց միջոցաւ, Պատերազմական տուգանաց վճարքը ժամանակէն առաջ

կրնայ ի գործ դրուիլ և Գերմանացի զօրաց մեկնումն շտապել. և այլն:

28. **Հիւս. Վերմ.** Պիսմարք նորեկիշխանն իւր ծառայութեանց փոխարէն Լաւէնպուրկի դքսութեան մէջ կ'ալուած մի կ'ընդունի Կայսրէն: — Շատերն այնպէս կը կարծէին թէ Ալզասի և Լոռէնի Իշխան պիտի կոչուի. հետեւաբար այն կողմերէն շէնքով շնորհքով կ'ալուած մի պիտի սեպհականէ իրեն: Բայց Պիսմարք աւելի հաստատուն համարած կ'երևի Հոյզդէյնի մօտերը հաստատուիլ՝ բան թէ Ֆռանցայի Վառօղարանաց քով բնակիլ . . . — :

ՊՍՏԵՐՍՁՄ

## ՖՐԱՆՔՕ-ԲՐՈՒՍԻԱԿԱՆ

Շար. եւ Վերջ (!)

Հոկտեմբեր 1870

28. **Ֆռանցա.** Փարիզեցիք քաղքին հիւսիսային կողմը կը յարձակին և Պուրժիւղաքաղաքը Գերմանացւոց ձեռքէ կը խլեն: Նոյն աւուր մէջ Փարիզու մէջ կը

(1) Տե՛ս Արամեան Տարեցոյց 1872, էջ 184:

հրատարակուի թէ Գարիպալտի զօրապետն ի Դուր ժամանած է ամսոյ 9 ին :

30. **Յոռնուս**. Գերմանացիք դարձեալ կը յարձակին ֆրանսզներուն վերայ և Պուրժի վերստին կը տիրեն :

» » Պ. Թիէն՝ Անդլիոյ, Ռուսիոյ, Աւստրո-Հոնկարիոյ և Իտալիոյ կառավարութեանց ըրած այցելութենէն զառնալով կը ժամանէ ի Վէրսայ, Պիսմարքի հետ զինադադարման բանախօսութիւնն ընելոյ համար : Նոյն երեկոյին կը ժամանէ նաև ի Փարիզ :

31. » Պէյէն զօրապետ Տիժօն քաղաքը կը զրաւէ :

### Նոյեմբեր .

2. **Յոռնուս**. Գերմանացիք կսկսին Մօրտիէի ու Նէօֆ-Պոիզաքի բերդերը ումբակոծել : Դուրի կառավարութիւնն հրաման կընէ զօրաժողով մի ևս ընել՝ առաւելագոյն թուով : Գերմանացիք կը սկսին պաշարել զՊէլֆօն :

6. » Զինադադարման վերաբերեալ խընդիրն՝ (որ լուծուած կը համարուէր) Փարիզի մէջ պաշարք առնուիլը Պիսմարքի կողմանէ մերժուելոյն պատճառաւ՝ չի յաջողիր և Թիէն կը վերադառնայ :

7. **Յոռնուս**. Մօրդիէյի բերդին պաշարն հատնելով Յոռնսզներն անձնատուր կը լինին Գերմանացւոց. և այն, սաստիկ ումբակոծուելէ յետոյ .

8. » Վէրտէօն բերդապատ քաղաքն անձնատուր կը լինի Գերմանացւոց : Լօսոի բանակն Օռլէանի կը մօտենայ և Վօն Տէն Դանն Գերմանացի զօրապետն անկէ կը քաշուի իւր բանակաւն :

» » Փարիզու բերդերէն սաստիկ ումբեր կը տեղան Պուլժի վերայ ուր Գերմանացիք չարաչար կը կոտորուին :

9. » Դուլմիէնի մօտ Վօն Տէն Դաննի և Յոռնսացւոց բանակներն սարսափելի նակատամարտ մի կուտան. Յոռնսացիք ընդ հրամանատարութեամբ տ՝ Օռլէ տը Փալատինի զօրավարին, բաւական ժամանակ պատերազմելէ յետոյ Տիզ մի ևս կը թափեն և կը վանեն զԳերմանացիս մինչ ի Դուր .

10. » Նէօֆ Պոիզաք բերդաքաղաքն չարաչար ումբակոծուելով և պաշարն հատնելով անձնատուր կը լինի Գերմանացւոց :

11. » Մէքլէմպուրկի մեծ Դուբսն Վօն Տէն Դաննի բանակին հրամանատարութիւնը իւր վերայ կ'առնու, տ՝ Օռլէ զօրապետի բանակին դէմ վերստին և առաւել ևս զօրութեամբ մաքառելոյ նպատակաւ :

15. **Ֆռանս**. Մէքլէմպուրկի դուքսն իւր բանակը դէպ ի յԱրևմուտք կը բշէ :

17. » Ֆռանսայի արևմտեան բանակին մէկ մասը Գերմանացոց դէմ սաստիկ պատերազմի կը բռնուի Տէօզի մօտ :

18. » Շամօնէօֆի մօտ Ֆռանսացիներն ու Գերմանացիք արիւնոռուշտ պատերազմի կընեն բայց և այնպէս ո՛չ մէկ և ո՛չ միւս կողմը կ'ընկրկի :

21. » Գերմանացիք Լա Լուբի և Համի կը տիրեն :

22. » Մէքլէմպուրկի Դուքսն Նօժանի կը տիրէ: Գերմանացիք Թիօնվիլը կ'ոմարակոծեն :

23. Պէլֆօռ բոլորովին պաշարուած է :

24. Մանդէօֆըլ զօրավարին ու Ֆռանսայի հիւսիսային բանակները զիրար կը զարնեն, նախ Բէզնըլի և ապա Մէզիէնի մօտ: Թիօնվիլ անձնատուր կը լինի: Լատօնի և Մէզիէնի մօտ Լօառի բանակին աջ թեւին ու Մէքլէմպուրկի դքսոյն ամբողջ բանակին մէջ ահռելի պատերազմ կը լինի և Ֆռանսըզներն հետզհետէ օղնուծեան հասնող գերմանական նորանոր զնդերուն առջև նուազելով Օուլէանի անտառին մէջ կը քաշուին:

26. » Ֆէռ ամրապատ քաղաքը բաւական ատենէ ի վեր ոմարակոծուելէ յետոյ անձնատուր կը լինի Գերմանացի բանակին:

27. **Ֆռանսա**. Գերմանացիք Ամիէն քաղաքին վերայ բազմուծեամբ կը յարձակին, Ֆռանսացիները սաստկապէս կը դիմադրեն, բայց յարձակումներն հետզհետէ կը նորոգուին և ֆռանսըզի փոքրիկ բանակն յետս ընկրկելով քաղբի բերդին մէջ կ'ամրանայ:

28. » Փարիզու զօրաց մէկ մասը Ավրօն լեռան բարձունքը կ'ելնէ և այն տեղ կ'ամրանայ :

29. » Փարիզու զօրքը քաղաքէն դուրս ելնելով Գերմանացոց վերայ կը յարձակի: Այս երկու բանակոց իրարու վերայ յարձակուած ու մարտնչած ատենին մէջ՝ Փարիզեցոց միւս մասը շարժական կամուրջներ կը զետեղեն՝ Մէն գետոյն միւս կողմն անցնելոյ համար, որք հետևեալ աւուր յարձակման մեծաւ մասամբ կը նպաստեն:

30. » Փարիզու զօրքն առաւել ևս բազմուծեամբ վերստին կը յարձակի Գերմանացոց վերայ և հետզհետէ կը յառաջանայ ամենասաստիկ և անհնար քաղխմամբ ու կը ստիպէ զգերմանացիս յետս ընկրկիլ, հալածելով զանոնք Պրիէն և Շամբինիէն :

### Ինկեսմբեր .

1. **Ֆռանսա**. Փարիզու զինուորաց մէկ մասը Պրիի և Շամբինի կայքն ու հրետանը գրաւելէ յետոյ, լաւ մի կը զետեղուի :

1. **Ֆռանսա**. Գերմանացիք Մանտօֆրլի բանակաւ դէպ ի Ռուան կ'արշաւեն:

2. » Գերմանացիք առաւելագոյն բազմութեամբ վերստին կը յարձակին Պրիի և Շամբինիի զրից վերայ և սաստիկ ընդդիմութենէն կատիպուին յետս ընկրկիլ:

» » Օռլէանի մօտ պատերազմի սկիզբն կը լինի Ֆոէտէռիկ Շառլի և տ'Օռէլի բանակաց մէջ:

3. » Արիւնըռուշտ պատերազմունք անդադար կը շարունակին Օռլէանի մօտ և Լօառի բանակն յՕռլէան կը բաշուի:

4. » Դարձեալ պատերազմունք կը շարունակին Օռլէանի մօտ և Ֆռանսըզները կատիպուին Լօառ գետին երկու կողմը բաշուիլ և այս կը լինի Լօառի բանակին երկուքի բաժնուելուն սկիզբը, որոց մին՝ ընդ հրամանատարութեամբ Պուրպարի զօրապետին Արեւելեան, և մյուսն՝ ընդ հրամանատարութեամբ Շանզի զօրապետին՝ Արեւմբսեան անունը կառնու:

5. » Գերմանացիք Օռլէան քաղաքը կը գրաւեն:

» » Դուրի կառավարութիւնն կը փոխադրուի ի Պօստօ:

6. « Գերմանացիք Ռուան քաղաքի վերայ դարձեալ կը յարձակին և գրաւեն զայն:

8. **Ֆռանսա** Մէքլէմպուրկի մեծ դքսոյն բանակը Շանզիի բանակին դէմ պատերազմելով կը յաղթէ զայն ի Պօնժան:

9. » Գերմանացիք Տիէլիի վերայ կը յարձակին ու կը գրաւեն զայն:

10. » Շանզիյի բանակն յետ սաստիկ պատերազմի կը նահանջէ և կը բաշուի ի Վանտօմ:

12. » Ֆայցպուրկ քաղաքն անձնատուր կը լինի Գերմանացոց:

» » Գերմանացիք կը սկսին Մօնմէտի բերդապատ քաղաքը ուժակոծել:

13. » Մօնմէտի քաղաքն անձնատուր կը լինի:

15. » Լօառի եզերաց վերայ սաստիկ պատերազմ կը լինի Ֆոէտէռիկ Շառլի և Շանզիյի բանակաց մէջ, և Ֆռանսըզները կը նահանջեն դէպ ի Մանշ:

16. » Ֆոէտէռիկ Շառլի բանակը կը մտնէ ի Վանտօմ:

18. » Նիւիտի մօտ սաստիկ պատերազմ կը լինի և երկու կողմն անպարտելի կը մնան:

21. » Փարիզու զօրքն դարձեալ դուրս կը յարձակի և Գերմանացոց շրժայն ճեղքել անցնելոյ համար սաստիկ պատերազմներ կը լինի ամէն կողմ և ընդհանուր կայից դէմ. և հետզհետէ առաւել ևս մերձե-

նալով արիւնը ուշտ ընդդիմութիւն և կոտորած կը լինի երկու թշնամեաց մէջ :

23. **Ֆռանց** Փօն-Նէօյլի կողմն երկուց թշնամեաց մէջ երկարատեւ պատերազմ ու մեծ կոտորած կը լինի :

27. » Վանտօմի մօտ Մուծօառի և Շառդոի պատերազմներ կը լինին, որոնք մեծ կոտորած կը պատճառեն թէ ֆռանացուց և թէ Գերմանացուց :

» » Գերմանացիք կը սկսին ուժակոծել զՓարիզ և Ավրօն անուռն ամրապատ լեռը :

28. » Լօնկ Փռէի մօտ երկու թշնամիք դարձեալ կը պատերազմին, և երկու կողմ անպարտելի մնալով կը դադրին : Գերմանացիք զինադադարում կը խնդրեն իւրեանց անկելոց դիակները թաղելոյ համար :

29. » Գերմանացիք Ավրօն լեռան վերայ բանիցս կըյարձակին և վերջապէս կը յաջողին զրաւել զայն :

31. » Վանտօմի մօտ դարձեալ մեծ պատերազմ կը լինի :

» » Նորմանտլոյ մէջ՝ Գերմանացիք ամենամեծ յարձակամար կը ուժակոծեն Ռօպէռը Տիսպլը անուռն բերդը և կը զրաւեն զայն :

**Յունվար 1871.**

2. **Ֆռանց**. Մէզիէն բաղաբն վեր-

ջապէս անձնատուր կը լինի Գերմանացուց :

2. **Ֆռանց**. Գերմանացիք կը սկսին ուժակոծել զՓէրօն բաղաբ :

3. » Պարիսի մէջ պատերազմ կը լինի և կը տեւէ մինչ ի հետեւեալ օր :

5. Գերմանացիք կը սկսին Փարիզու հարաւակողմեան բերդերը վերստին ուժակոծել, որք արդէն 25,000 էն աւելի ուումը ընդունած էին :

6. » Գերմանացիք Շանզլիի բանակին դէմ կը պատերազմին, և այս արիւնամաթախ պատերազմը վեց օր կը տեւէ անդադար : Գերմանացիք հետզհետէ օգնական զօրք կընդունին, իսկ Ֆռանսըզներն առանց օգնութեան և պաշարի կը նուաղին և յետս ընկրկելով Մանսի կողմը կը քաշուին :

8. » Գերմանացիք երեկուրնէ կը սկսին ընդհանուր կերպիւ ուժակոծել զՓարիզ ամենայն սաստկութեամբ :

9. » Պուրպաքի զօրապետին բանակը դէպ իՊէլֆօս արշաւած ատեն Վիլէոսէքսէլի մօտ Գերմանական Վէռտէո զօրապետի բանակին կը հանդիպի և այն տեղ ճակատամարտ մի տեղի կուեննայ .

Այս դէպքը Պուրպաքիի բանակը ճամբէն կը շղեցընէ :

» » Փէրօն բաղաբն անձնատուր կը լի-

նի Գերմանացւոց : Գալիպառտի կը ժամանէ ի Տիժօն :

10. **Ֆռանսա** . Փարիզի զօրքը դարձեալ դուրս կը յարձակի և այս յարձակմունքն որ Գլամառի , Մէօտօնի և Պուռօի վերայ կուղղուին , երեք օր կը շարունակին անդադար :

15 » Փարիզու մէջ Գերմանացւոց ուռմբերէն մեռնող անմեղ մանկանց Յաղման հանգէսը կը կատարի յաւիտենական ոգով :

18. » Պէլժօռի մօտ՝ Լիսէն գետի եզերաց վերայ Պուրպաքիյի և Վէռտէռի բանակներն ամսոյս 15 էն ի վեր անընդհատ կը պատերազմին : Ֆրանսեզներն հետզհետէ կը յարձակին Գերմանացւոց վերայ , բայց նոցա նախապատրաստած կայից ու զրից առաւելութենէն միշտ յետս կ'ընկրկին և վերջապէս կը բաշուին ի Պրզանսօն :

19. » Փարիզու զինուորքը ամենամեծ յարձակում մի ևս կընեն ու մինչև Վէրսայլի դռներուն կը հասնին պատերազմաւ :

Նոյն առուր մէջ Ֆրանսայի հիւսիսային բանակն Սէն-Քէնդէնի մօտ Գերմանացի բանակաց դէմ պատերազմի կը բռնուի և երկար ատեն մաքառելէ յետոյ վերջապէս յետս կ'ընկրկի :

21. » Գերմանացիք կը շարունակեն իւր-

եանց ուժակոծուծիւնը Փարիզու վերայ և առաւել ևս սաստկացնելով՝ կը սկսին նաև ուժակոծել զՍէն-Տընի :

25. **Ֆռանսա** . Վէրսայլի մէջ Ժիւլ Ֆալո և Պիսմարք կը սկսին զինադադարման խնդրոյն վերայ խօսակցիլ :

25. » Լօնկվի ամրապատ քաղաքն անձնատուր կը լինի Գերմանացւոց :

27. » Փարիզու ուժակոծուծիւնը բոլորովին կը դադարի :

28. » Փարիզու անձնատրուութեան պայմանները ( 4 ամիս 12 օր պաշարեալ մնալէ յետոյ ) կը ստորագրուին :

Փարիզու ուժակոծուծեան զոհերուն թիւն է 383. Այսինքն, 107 մեռեալ և 276 վիրաւորեալ : Մեռեալներուն մէջ կան, 31 Տղայ 23 կին մարդ և 53 այր մարդ : Վիրաւորեալներուն մէջ կան, 36 Տղայ. 92 կին մարդ և 148 այր մարդ :

29. » Երկու պատերազմ ևս կը լինի Տամպագուրի և Շաֆոայի մօտերը՝ Գերմանացւոց ու Ֆրանսացւոց մէջ՝ և պարտութիւնն անորոշ մնալով՝ Ֆրանսեզներն ի Փօնդառլի կը բաշուին : — Այս եղաւ Ֆրանսօ Բուսիական վերջին պատերազմն. ուր երկոցունց կողմանց անկելոց համար կրնամք ասել թէ ի նանիր նահատակեցան, և այն

Մեծին Ֆրէտէրիկին տարեկից Ֆրանսերէն առական յիշելով (1) կը յարեմք թէ՛ ասոր կը-սեն (travailler pour le Roi de Prusse)  
Աշխատիլ վասն Թագաւորին Բրուսիոյ :

### Փեհրվար .

16 յ Պէլֆորը պաշտպանող զինուորը ընդդիմադրուածնէ կը դադարին, և զինուորական պատուով անկէ դուրս կ'ելնեն :

### ՎԵՐՁ

(1) Մեծն Ֆրէտէրիկ ծայրայեղ խնայողութեամբ այնչափ կծոտ հանդիսացաւ որ պալատան համար հաւկիթներուն անգամ դրամ չի վճարելոյ նպատակաւ բազմաթիւ հաւեր գնեց ու ծառերու մէջ փակեց և սկսաւ ամէն առաւօտ ինքը թուել հաւկիթաց որքանուծիւնը . ուզեց նաև անոնց մէկ մասը ծախու հանել : Այս կծոտ բնավորութեամբ շատ անգամ գծուծ հաշիւներով՝ գործաւորաց աշխատութեան գները կը գեղջէր և կամ անվճար կը թողուր անոնց աշխատութիւնը , որք կամ անգեղ ընդունել կուզէին իւրեանց պահանջը և կամ իսպառ հրաժարելով այս ատուծեամբ կը մխիթարուէին :  
J'ai travaillé pour le Roi de Prusse.

Այս ատուծեան ճիշդ նշանակութիւնն է ի Հայ Լեզու Բազում աշխատեցայ և ոչինչ կալայ :



## ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

ՔԱՋԱՍԻՐՏ ԵՐԿՐԱԳՈՐԾ

Բարեկամ ըսաւ Գրքածախն Գիւղա-ցւոյն , դուն ալ , ամենուն պէս , ինչու Արամեան Տարեցուցէն հատ մը չես առնուր . — Ինչ , պատասխանեց Գիւղացին , Օրացոյցմի Պապայինը չառնեմ ու բերքս կարկըտահարելու առիթ տամ հն . Գնա լիցի . Տանկ վրաս մի գար . . . Անդիստամեան Օրացոյց մի տուր նայիմ , որ ստակդ տամ . . . Եւ հրաժարիքիմ ի Սատանայէ . . .

ԽԱՄԻՆՃԻ ԽՈՂԱՐԱՐ

Չարնր , ըսաւ Էֆէնտին , կերակուր-ներդ հում են . — Պատճառն յայտնի է , պատասխանեց խոհարարն . Երբոր Էֆէն-տուհի Հանըմն անձամբ գնեց ընդեղէնը (զիպզիպաթ) և միսն ալ Պօլիսէն բերել տուաւ , կարծեցի թէ կերակրոց եփն ալ ինք պիտի տար :

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԻ

Ծօ չէս ամաչեր , ըսաւ Մայրն իւր Մանկան , Վրադ գլուխդ նայէ թէ ո՞րչափ ցեխտտեր ես . և այդպիսի արատաւոր հագուստով ինչպէս դէմս կելնես . Կորի գնն . Վրաս մի քսուիր : — Մայր , պատասխանեց

Մանկիկն, մեր Կատուիկն յինէ աւելի արատներ ունի իւր վերան. ինչո՞ւ զայն զգուեելով կը շօյես ու զիս կը վաճնտես :

ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՔ ՕԳՈՑ

Ինծի հայէ, ըսաւ Օրացոյցճի Աստեղաբաշխն ժամանակին, ժամանակն ալ մանգաղ ի ձեռին եկաւ ու ծուկ բարև նորա դէմը կեցաւ : Այն ինչ օրն թնչ տեսակ օդ պիտի ընես, հարցուց նմա. — Պայծառ օդ, պատասխանեց ժամանակն. — Բայց ես, ըսաւ, իմ աստղաբաշխական Անսխալխիսմօթաթօս Օրացուցիս մէջ, ժամը վեցէն մինչև յինն կարկուտ նշանակած եմ, և անոր համար կուզեմ որ անպատճառ երթաս այն ատենի պայծառ օդը կարկճի դարձնես. — Ամենայն հիւսմամբ, պատասխանեց ժամանակն՝ իւր սովորական բժժիծաղովն ու մեկնեցաւ : Նոյն աւուր երեկոյին անսխալ Աստեղաբաշխն իւր տան ապակիներն ամբողջապէս խորտակուած գտաւ. Անիծեալ ժամանակն ալ մանգաղը ձգեց երկու թեւերը մէջքին դրաւ և անսխալ Աստեղաբաշխին վերայ հայեցուածք մի ձգելով բնհրանը կոխեց և խնդալով մարեցաւ...

ԱԻԵԼԻ ԳԻՏՆԱԼՈՒՆ ՎՏԱՆԳԸ

Սպանիոյ Թագաւորին (Ֆիլիպ Բ.) առաջին Քարտուղարն օր մի Պետական խոր-

հրրդարանէն դուրս ելնելէն յետոյ՝ ամուսնոյն ներկայանալով՝ Տիկին, ըսաւ, սընտուկներդ կապէ ու պատրաստուէ որ ճանբու ելնենք, քանզի անմտութեամբս կուահել տուի Թագաւորին թէ ես իրմէ շատ աւելի բան գիտեմ : Կինը հասկըցաւ ու ժպտեցաւ :

— Եթէ այս եղելութիւնն առաջուց մտքերնիս բերէինք, Ծննդեան, Մկրտութեան և Ամուսնութեան Վաւերագրոյն խնդիրը չէինք առաջարկեր այն ատենի Հայոց ազգային Վարչութեան, հետեւաբար՝ իրմէ շատ գիտցող չէինք համարուէր ու Վաւերագիրն ալ ցարդ բարձի թողի չէր մնար : Եւ մեր ալ Սոյ Նորընտիր Կամոզիկոսէն բռնելով մինչև երախայ Գիլիկեցւոյն տարիքը կ'իմանայինք և այս կերպիւ զոնէ Պօլսեցւոց առջև ամօթով չէինք մնար — :

ԱՊԱԳԱՅ ԽՈՍՏԱՅՈՂ ՏՂԵԿՆ

Ի՞նչ դժբաղդութիւն, ըսաւ Մայրն իւր Տղեկին, կարծեմ թէ երբէք կարդալ չըպիտի կարենաս սովորիլ. . Այն կրկնեց Հայրն ալ, Այն. քանզի այս անպիտանն ոչ միայն փառասիրութիւն՝ այլ և ինքնասիրութիւն ըսուած զգացումն անգամ չունի. — Կը սխալիս, Հայր իմ. պատասխանեց Տղայն, երբոր մեծնամ՝ Զի մի պիտի զնեմ և անոր վերայ հեծնալով ամէն Թաղ և ամէն Փո-

զոց պիտի վազեցնեմ զայն ու մարդիկ թնձել տամ . և այն ատեն պիտի տեսնես թէ ամեն Մարդ և Լրագիրք անգամ որքան պիտի խօսին իմ վերայ :

### ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՔՈՒԷԱՐԿՈՒԱՅ

Սահմանադրութիւնը չկարդացող եւ ընտրելու իրաւունք ունեցող Հայերէն մեծագոյն մաս մի Նոր-Խանի փողոցէն անցած ատեննին՝ այնչափ հաւանած ու զմայլած են եղեր այն՝ ա՛ն քիւ սէծօսնէօօօ կանչող թուժակի ձայնին և ասուժեանը որ կ'ափսոսան եղեր՝ թէ քնչպէս ընտրելեաց ցանկին մէջ անցընելոյ մոռացած և այնպիսի ճառախօսութիւն ընող թուժակն Ազգային ժողովներու անդամութենէ զրկած են . . .

— Այս նշանաւոր կացութիւնը յոյս կուտայ մեզ թէ յիշեալ քուէարկութեա պապայիւն մէջ՝ զթուժակագոյնսն պիտի ընտրեն — :

## Դ Ա Ր Մ Ա Ն Ք

### ՇՆՉԱՐԳԵԼՈՒԹԻՒՆ

Ափ մի ծոթրին ( զածրին ). 60 կոամ մատուտակ (միյան քէօքիւ) մէկ տրամ գազտիկուր (սըզըր տիլի) 4 օխա ջրոյն մէջ եփելու

և առաւօտեան ծոմ բերնով և երեկոյեան կերակուրէն առաջ մէկ գաւաթ խմելու է :  
ԴԱՆԱԿՈՎ ԿՏՐՈՒԱԾ ՎԵՐՔ

Շուքը չորցած ափ մի առուոյտի ծաղիկ ( fleur de melilot ) 200 տրամ իւղին մէջ ( զէյթին եաղի ) դիր որ մնայ և այդ իւղին մէջ թաթխէ կտաւն ու վէրքին վերայ դիր , բայց այդ լաժին ու վէրքին մէջ տեղը առուոյտի տերեւէն քանի մի հատ միշտ դնելով կապէ և օրը մէկ կամ երկու անգամ փոխէ : Այս կերպիւ ամենէն վտանգաւոր վէրքին դարմանը եօթն օրէն աւելի չի տւեր և փորձուած է որ անպատճառ կը բժշկուի :

### ԱՅՐԵՏՈՒԱԾՔ

Այրած մարմնոյն մորթը դեռ չուռած՝ այն տեղը քացախով լուալու կամ քացախին մէջ խոթելով լրգցնելու է քանի մի վայրկեան . մէկ քառորդ կամ կէս ժամէն պիտի տեսնես որ ցաւն ալ կը փարատի :

— Այլ դարման . Մարած ածուխն այրած տեղին վերայ եթէ դրուի ցաւը հետզհետէ կը տկարանայ և մէկ ժամէն յետոյ բոլորովին կը փարատի : — Այլ դարման , Տաք ջրէն այրածին համար ուրիշ դեղ ընելու է . Թարմ հաւկթին դեղնուցը ալիւրին , աղին և իւղին հետ խառնելով՝ սպեղանի ( մեհլէմ ) շինելու և վէրքին վերայ դնելու է :

— Այլ դարման. Ամերիգայի մէջ սովորութիւն եղած է խաշած եղիճի (ըսըրկանօժու) ջրով այրեցուածքը դարմանել: Եղիճի տունկը արմատէն կը խլեն և մանր մանր ճարդելով Ալքօօլի մէջ (սպիրթօ) կը դնեն և կը թողուն զայն բանի մի օր. և այսպէս պատրաստելով՝ պէտք եղած ատեն լաթի մի կտոր կը թաթխեն անոր մէջ և այրած տեղին վերայ կը կապեն զայն, որ խակոյն կը տոչորէ վէրքը և կը բուժէ:

## ԵՐԵՍԻ ՍՊԻ

Լից անձրև ջուրը գաւաթի մէջ, դիր ափ մի կարոս (մայտանօս) անոր մէջ, որ առաւօտէն մինչ յերեկոյ կամ յերեկոյէ մինչ յառաւօտ լաւ մը խխմի:

Երեսդ ջրով ու ճանառով (սապօն) լաւ մը լուալէն յետոյ՝ այնպիսի շփումն տալով սրբուէ, որ երեսիդ սպիններն սկսին կարմրիլ և անոնց գլուխներուն բերանը բացուիլ. այնուհետև մութ կակուղ լաթի մի կտոր կամ սպունգ մի և թաթխէ այն կարոսեայ անձրև ջրոյն մէջ և երեսիդ բսէ զայն մեղմով իմն, և կրկնէ քանիցս անգամ. եթէ այսպէս ատեն մը շարունակես՝ ոչ միայն սպիներդ կ'անհետանան՝ այլ դէմքդ այնպիսի փափկութիւն մի կըստանայ որ դու զինքդ հայելոյն մէջ տեսած ատենդ ոչ

միայն պիտի զարմանաս, այլ պիտի սքանչանաս քու դէմքիդ բնական փայլունութեան վերայ:

## ԱՆԿՈՒՄՆ ՍՐԲԱՆԻ

Սրբանը դուրս ընկնելոյ հիւանդութիւնը տղայոց ստէպ կը պատահի. և այն ուրիշ բանէ չէ՝ բայց եթէ տղուն չափազանց լաւէն, պօռայէն, բնութեանը պնդութենէն կամ թուլութենէն եւ անոր պատճառաւ ճիբով տըքայլէն, ծանր բան վերցընելէն և սաստկութեամբ հազալէ յառաջ կը գայ:

Անկեալ սրբանը դիւրութեամբ տեղը կը դուրի, սակայն փոքր ճիգով մի դարձեալ դուրս կ'ընկնի: Այս անկումը բոլորովին արգիլելոյ համար պէտք է նախ՝ պաղ ջրով կամ պաղլեղի (շապ) և կամ կաղնէփոճկի (մէշէ ծառի կեղև) փոշոյն ջրով լուալ դուրս ընկած տեղը. (որուն Պրոկտոս Սքաւտօս ալ կըսուի) և ապա լաթը կամ սպունգը այս դեղերու մէկին մէջ թաթխելով, պէտք է Սրբանին վերայ դնել և անոր վերայ բարձուկ մի ևս աւելցնելով կապիչը մէջքին կապել:

Այլ կերպ. Մանկան երկաթեայ օշարակ (չէլիք շիրօպու) խմցնելու է թէ առաւօտեան և թէ երեկոյեան պահուն:

Շարունակելի.

# ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՃԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱԿԱՆԱԻՐ ԱՆՁՆՆՑ

## ԹԻԷՌ

Լուի-Ասօլժ Թիէն՝ Մարսիլիայ ծնած՝ 18  
սարեկան էր երբ սեղույն հետաւանէն էլաւ  
ու էֆս գնաց, իրաւաբանութիւն ուսանե-  
լոյ համար : Յետոյ Փարիզու *Կոլեսիոյ* ի-  
*սիօնէյի* մէջ յօդուածներ՝ միանգամայն  
այլեւայլ գործեր հրատարակեց ու Լաճիքի  
էւ Կայլաանի ծանօթացաւ : Նոյն միջոցին  
գրեց *գՊասնութիւն յեղափոխութեանն*  
*Յռանսայի* : 1829 ին Արման-Գառէլի հետ  
միանալով՝ *Նասիօնայ* անուն Լրագիրը  
հիմնեց էւ 1830 ի յեղափոխութեան նը-  
պասեց ու Լուի-Ֆիլիպի կառավարու-  
թեան գլուխն անցաւ այն հնչակաւոր ա-  
ստութեամբ, թէ՛ *Արֆայն քաղաւորք, քայց*  
*նչ կառավարք* . Le roi règne mais il ne  
gouverne pas : Մէծ դեր խաղաց մինչ ի  
1840, յորում պատեօնէ՛ ձգուելով՝ գրեց  
*գՊասնութիւն Բիշիստութեան էւ Կայս-*  
*րութեան* . 1848 ին Նափօլէօնի համար  
հուէ՛ ձգեց . իսկ 1852 ին արգիլեցաւ ի Մա-  
գաս էւ ախտեցաւ ի Ֆրանսէօրդ . 1863 ին

վերսին երեսփոխան ընտրուելով Նափօ-  
լէօնի ընդդիմադիր մասին յարեցաւ ,  
Օռլէանի ձեղը վերականգնելոյ նպասա-  
կաւ , իսկ 1870 ին ընտրեալոյն համա-  
րեց գՀանրապետական կառավարութիւնն  
վասն Ֆրանսայի :

## ՊԻՌՍ Թ. ՊԱՊ ՀՌՈՎՄԱՑ

Ադրիական ծովուն վերայ՝ Մինա գե-  
տոյն բերեհի մօտ Սինէկակիա անուն փոքր  
(7000 բնակչօք) քաղաքին մէջ ծնած է  
(Իւաննի-Մարի, Գօնդ սի Մասայի-Ֆեր-  
րէրի) Պիոս Թ. ի 13 Մայիսի 1792, որ  
նախնական ուսմունքը լրացնելէ յետոյ՝  
սկարութեան պատեանաւ առաջին նպաս-  
ակը (գիմուարութիւնը) ձգեց ու քահա-  
նայ ձեռնադրեցաւ էւ 1823 ին ի Գիլլի  
առաքեցաւ իրեւ քարոզիչ : Երկու տա-  
րիէն յետոյ Իմօլայի Եպիսկոպոս էւ ապա  
Միփօլթայի Արքեպիսկոպոս էւ վերջապէս  
1840 ին Կառսինալ անուանեցաւ :

Երբոր Պապ ընտրեցաւ՝ Զուիցերացի  
պահապան զօրքը արձակելոյն էւ քաղա-  
քական յանցաւորաց ընդհանուր ներողու-  
թիւն տալոյն պատեանաւ կղերական դասը  
դժկամակեցաւ , էւ այսպէս , Պիոս Թ. օր  
ըստ օրէ համարուր կորոյս : Վիկդոր

Էմմանուէլի Հօր Գառլօ-Ալպէռդի հետ խորհրդակից կարգեցաւ Իսպիոյ միացման մասին, եւ 1847 ին օրհնեց իւր եւ Սարսէնիոյ բանակը զԱւստրիացին վանելոյ համար: Բայց տեսնելով որ Սարսէնիոյ Թագաւորութեան ներքեւ պիտի միանայ Իսպիան, սկսաւ ընդդէմ նոյն կառավարութեան գործել. հետեւաբար ըստ բաւականին ալ նպաստեց Գառլօ-Ալպէռդի յաղթուելոյն: Իսպացիք գայրակղեցան եւ 1859 ըն ձախող տարի մի եղաւ Պապին աշխարհային տէրութեան, յորում առաջին սաստիկ հարուածն ընդունեց Գաստէլ-Ֆիսարսոյի մէջ, ուր պապական բանակն, ընդ հրամանատարութեամբ Տր Լամօրիսիէ գործապետին, ամբողջապէս ջնջեցաւ: Եւ 1866 ին Ֆռանսայի եւ Իսպիոյ մէջ ստորագրեալ դաշնագիրն, որ զՀռոմա (ի բաց առեալ Հռովմա քաղաքը) Իսպիոյ ներքեւ ձգեց, Պապական աշխարհիկ իշխանութեան վերջին հարուածը տուաւ: Տես եւ զՏարուակութիւնն ի Ժամանակագրութեան գործոյս:

Շարունակելի



CABINET DE LECTURE  
OTTOMANE  
à Constantinople  
Rue Divan-Yoli, N° 73  
**CERAPHIM EFFENDI**  
Fondateur et Directeur du dit Cabinet.

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ ՕՍՄԱՆԵԱՆ

(ԳՐԱՍԹԻԱՆԷ)

Ի Տիվանկոյու. Թիւ 73

Վերահասուչ

ՍԷՐՍԱՅԻՄ ԷՖԷՆԸՏԻ

Օսմանեան Պետութեան ընդհանուր Լրագրաց կեդրոնական Ընթերցարանն է այս, որոյ Վերաստեղծութիւնը կրպակակնի Սէրափիմ (Սրապիօն) էժէնսիի, որն որ Օսմանեան Պետութեան մէջ այսպիսի հաստատութեան մ'առաջին հիմնադիրն եղաւ. եւ որուն մասնաւորապէս յանձնուեցաւ նոյն հաստատութեան Վերաստեղծութիւնը:

Այս Ընթերցարանին մէջ կը գտնուին Օսմանեան Պետութեան մէջ Թրքի լեզուաւ հրատարակուած ամեն Լրագիրք եւ այլ Գրեանք, ի դիւրութիւն ընթերցասիրաց:

## Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ Ք

Թիւ 8

Կայի — չըկամ. Չըկայի — կամ.  
Այսպէս էի, չ'եմ յարածամ.  
Ինչ ունիս բեր, տուր ինձ կուլ տամ,  
Վերստին ուզէ՛ անմարս ետ տամ:

Երբոր Թևօքս յաշխարհ վանիս՝  
Մի սէրս պըղծեր. Միտ դիր խօսքիս.  
Չըլլան Թէ կողերուս զըպիս,  
Որ մի գուցէ յաստեաց փոխիս:

Այս ըսածէս մի վախ բերեր,  
Ման խօսեցայ, բայց միտքս այն չէր.  
Զի Տէրն է ինձ պաշտօն տուեր,  
Բաշխել միշտ կեանք, վիշտ, յոյս և սէր:

Զի երբ հեռի գաս՝ բեզ կը մեղմեմ,  
Սըրտիս զարնես՝ բեզ կը զըրկեմ.  
Շատ հեղ վէրքիդ վուշ կը կապեմ  
Ի՛ամէն պահանջըդ կը տուեմ:

Ինչպէս որ 1872 Թուականի Տարե-  
ցուցին մէջ խոստացած էինք, նոյն շըր-  
ջանին մէջ այս Հանելուկաց Թիւ 8 ին  
համար 60՝ և 10, 13 Թուոց համար ալ  
40 ական ֆրանքի գիրք պիտի նուր-

Թիւ 10

ՅԱՆԷԻԳ ես յիմե կայի,  
Բայց մինչ յայնժամ շինուած չէի՝  
Երբ Զինակիր մ՛ իս էացուց,  
Այրն ստեղծեալ՝ զիմս ինձ եցոյց:

Թիւ 13


Անդոցս յալեց՝ չիք ինչ իմ քան,  
Փարսած փռնետր՝ աս անդ եփ քան,  
Երբ հացն ուզեմ՝ սուր ինձ ցոյց քան.  
Ով՞, կամ ինչ եմ, անունս քոզ քան:

րեմք: Իսկ եթէ 1873 ին մնայ սոցա  
լուծուեմք, նոյն շըջանի մէջ լուծողին  
պիտի նուիրեմք, Թիւ 8ին համար 100՝  
և 10, 13 Թուոց համար ալ 60 ական  
ֆրանքի գիրք:


Հանելուկաց լուծմունքը յառանձինն  
բացատրուած, զմտած, ու յանձ-  
նուած են Պաղտատար աղա Մրապեա-  
նի, (որ Մէրճան Զարըր Թիւ 29 Փարի-  
զու Գրասան մէջ մեր Գրքերը և Տարե-  
ցոյցները կը ծախէ և զմեզ կը ներկա-  
յացնէ), յորմէ պիտի ընդունուին և այս  
նուէրքս:

Ճ. Ա.

# ՅԱՆԿ ՆԻԻԹՈՅ



Համառօսագրութիւնք	էջ 8
Կոյսն առ Լուսին	8
Օրացոյցք	9
Նամակ Վաւերացման Օրացուցի	91
Ժամանակագրութիւնք, Բանայիրք, Արեգակնային աղիւսակ եւ Յու- ցակ ամսոց	92
Հայք եւ Թուական Հայոց	97
Կաթողիկոսութիւնք եւ Պատրիարքութիւնք	103
Նշաններ եւ Ամուսնութիւնք	105
Յուցակ Երեսփոխանաց, եւ ամենայն անդամոցն Վարչութեան Հայոց	106
Յուցակ Հայ Առաջնորդաց	112
Վիճակագիր Հայոց ի գաւառս	114
Այլ պատրիարքութիւնք	119
Յուցակ Հայ Բժեկաց	120
Վիճակագիր Թուրքիոյ	129
Վիճակագիր Տերութեանց	173
Քաղաքական Ժամանակագրութիւնք	193
Յուանօ-Բրիւսական Պատերազմ	231
Զուարճալիք	243
Բժեկական Դարմանք	246
Կենսագրութիւնք ականաւոր անձանց	25
Հանելուկք	25



6641.

2013

20 02

« Ազգային գրադարան



NL0032809

*Handwritten signature or mark in blue ink.*



059  
4-85